



Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է ավտոմեքենայի գրավով վարկավորման պայմանագիր, որի շրջանակներում կնքվել է նաև տրանսպորտային միջոցների ապահովագրության պայմանագիր, որտեղ Ապահովագրիչը և Շահառու հանդիսացել է Բանկը:

Դեպի Վանաձոր երթևեկելիս Հաճախորդի մեքենայի առջև հայտնվել է թափառող շուն, ինչի հետևանքով Հաճախորդը արգելակել է. մեքենան դուրս է եկել ճանապարհից և ընկել ճանապարհից 10-12 մետր հեռավորության վրա գտնվող 7-8 մետր խորությամբ ձորը: Պատահարից հետո վարորդը դուրս է եկել ձորից, այլ անձանց օգնությամբ հասել է տուն, այնուհետև տնային պայմաններում իր վնասվածքները բուժելուց և շոկային վիճակից դուրս գալուց հետո, առաջին հնարավորության դեպքում դիմել է Բանկին, այնուհետև՝ ապահովագրական ընկերությանը: Դրանից հետո Հաճախորդը դիմել է Ոստիկանություն: Ապահովագրական ընկերությունը, սակայն, մերժել է հատուցման վճարումը՝ դեպքի վայրը քելու և անհապաղ չտեղեկացնելու հիմքով, իսկ Բանկը քայլեր չի ձեռնարկել մերժման հիմքերը բողոքարկելու և հատուցումը ստանալու ուղղությամբ:

Ծանոթ լինելով Հաշտարարի գործունեությանը՝ Հաճախորդը դիմել է վերջինիս՝ Բանկից պահանջելով տրամադրել վնասի հատուցում կամ նույն գումարի չափով վարկային մնացորդի նվազեցում:

Հաշտարարը ուսումնասիրել է Բանկի դիրքորոշումը: Ըստ Բանկի, թե վերջինս ինչպիսի գործողություններ կձեռնարկեր ապահովագրական ընկերությունից հատուցում ստանալու համար դա Հաճախորդին չէր առնչվելու, քանի որ ի վերջո այդ հատուցման գումարը կարող էր տրամադրվել նրան և /կամ/ չուղղվել վարկային պարտավորությունների կատարմանը: Վերոնշյալից Բանկը եզրակացրել է, որ Հաճախորդը չի հանդիսանում ապահովագրական պայմանագրի կողմ և փաստորեն պահանջում է իրեն չպատկանող իրավունքի կատարում: Բանկը նաև նշել է, որ Հաճախորդը Բանկի կողմից տեղեկացվել է ապահովագրական կանոնների վերաբերյալ. այդ մասին է վկայում այն փաստը, որ վթարից հետո նա դիմել է Բանկին և իրականացրել է հաջորդական գործողություններ:

Հաշտարարը, ուսումնասիրելով գործի մանրամասները, ինչպես նաև համապատասխան օրենսդրական ակտերը, եզրակացրել է, որ Բանկի այն պնդումը, որ ապահովագրական հատուցումը կարող էր ուղղվել այլ նպատակներին, քան գրավի առարկայի վերականգնումը կամ վարկային պարտավորության նվազեցումը, որպես այդպիսին հակասում է գրավի էությանը: Հաշտարարը նաև եզրակացրել է, որ Հաճախորդի կողմից իր պարտավորությունները պատշաճ կատարվել են, մասնավորապես՝ նա առաջին իսկ հնարավորության դեպքում վթարի մասին տեղեկացրել է ՀՀ ոստիկանությանը:

Հաշտարարի գրասենյակում հանդիպումներ են կազմակերպվել Բանկի և Ապահովագրական ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ: Այս բանակցությունների արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն Ապահովագրական ընկերության հետ՝ ամբողջ պահանջի չափով ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ:

Այսպիսով, կողմերի մեջ ծագած վեճը լուծվել է Հաշտությամբ: